Արձանագրություն N 2

ՀՀ քննչական կոմիտեի կողմից ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀ ՔԿ ԷԱՃԾՁԲ-ՆԱ-24/1** ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

23 մայիսի 2024թ.
ժամը՝ 12:00

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Հովհաննիսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Թևոսյան, Մ. Անտոնյան, Լ. Աթանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Բաբայան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	*Չափաբաժնի անվանումը*	*Գնման հայտով սահմանված գնվելիք ծառայության գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)*
1	ներքին աուդիտի ծառայություններ	4 000 000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 21.05.2024թ.-ին ժամը 11:00-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 22.05.2024թ.-ին ժամը 11:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) ըստ չափաբաժինների և հասցեները.

հ/հ	*Մասնակիցների անվանումները*	*Հասցեներ*
1	Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 02618043, ՀՀ, ք. Երևան, «Դոմ Մոսկվի» բիզնես կենտրոն, Արգիշտի փ. 7, 2-րդ հարկ, procurement@crowe.am, հեռ. 099 54 33 88, 060 53 23 23
2	ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 00131856, ք. Երևան, Նորագավիթ 13 փողոց, տուն 21/1, auditglobaudit@mail.ru, հեռ. 091 27 22 23

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ՔԿ ԷԱՃԾՁԲ-ՆԱ-24/1 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

eauction.armeps.am համակարգի միջոցով հրավերով նախատեսված հարցումներ չեն եղել:

6. Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Չափաբաժնի համար	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ		
			Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	**Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ**	4 000 000	5 000 000	20 %	6 000 000	1 500 000	20 %	**1 800 000.00**
	ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ ՍՊԸ		3 500 000	20 %	4 200 000	2 000 000	20 %	2 400 000.00

Աճուրդն ամփոփվել է 22.05.2024թ.-ին և Համակարգի կողմից

- 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել **Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ն:**

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակցի ներկայացրած հայտը, արձանագրեց, որ

1. Համակարգի կողմից 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ի** հայտում անհամապատասխանություններ առկա չեն:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

03.06.2024թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշեց՝

8.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝

- 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ-ին** հայտարարել որպես ընտրված մասնակից:

8.2 Հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

8.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ **Կարեն Հովհաննիսյան**

անդամներ՝ _____ **Սոնա Թևոսյան**

_____ **Մերի Անտոնյան**

_____ **Լուսինե Աթանյան**

քարտուղար՝ _____ **Նաիրա Բաբայան**